103. ԱՅԱՆ ԾԸԾԸՂԵՍ Ա

Ընիս ա, չընիս մին մարթ, մին կնեգյ։ Ըտրանց ընիս ա էրկու տղա։ Մեծը խելունք ա ընիս, պիծինը՝ պրեալ։ Մին տարե սով ա ընգնես։ Էտ մարթը նան ուրան կնեգյը մրռնես ըն։ Խոխեքյը մնաս ըն անգար։

Ըտրանց տատը յոր ա ունես, պհես, թա. — Էսա մրծացալ ըն, ուրանք էլ հսած խոխեքյ ըն, թող քյինին կործ անին, կյան ինձ պահին։

Էտ խոխեքյը ըսկսես ըն կործ ընես, էտ պառավը պհես։ Մեծ տղան լավ ա կործ ընես, պիծի տղան շան ամագյ էլ չի ընես։ Մին օր, էտ պառավը հիվընդընաս ա։ Մեծ տղան տանը կնաս ա, ըտրան հաց, ճուր տաս, լըղրցնես, վերչը թամուզ պհես։ Ամմա էն պիծի տղան քյինիս ա ծմական փադ ընես, պիրիս։

Մին օր հավան փիս ա ընիս։ Էտ պրեալը ետ ա տրռնաս, թա ըսօր էլ թող այան յրես պահիմ, տու քյինի հանգը։ Մեծ ախպերը, վեր քյինիս ա, էտ պիծինը պիրիս ա մին ղրզղան ճուր իփիս, այուն թեշտումը տինիս, ըծես էն հիվանդ պառվեն յրա, սարավ լըղրցնես ա։

Այան մնաս ա թեշտումը, մրռնես ա, մնաս կրռքնեն պեց։

Մեծ ախպերը կյաս ա, թա. — Ա մեռա՜ծ, այան հո՞ւնց ա։

Թա.— Էն ա ծրծրղես, ըռութանան, վեր լըղրցրալ ըմ, էն վրխտանց միչև մհենգյ էն ա ծրծրղես։

Մեծ ախպերը ըսես ա. — Ա՛ մեռած, պա այան հինչու հիվընդացալ ա, կրես չի թա խոսե, էտ հո՞ւնց ա, վեր մհենգյ ծրծրղես ա։

Պիծի ախպերը ըսես ա.— Հրվրտաս չրս, քյինի տրես։

Մեծ ախպերը քյինիս ա տրսնաս այան մրեռա՞ծ։ Ըսես ա.— Ա՛ փուչացած, դև վեր այուն ըսպանալ ըս, տու տանը կաց, յրես քյինիմ մեր պարիկամնըերեն ասիմ, կյան, տանինք, թաղինք։

Մեծ ախպերը վեր քյինիս ա, էտ պիծինը պիրիս ա մին չաթու կպես այուն պկան, քաշ տաս։ Վեր հսնես ա մին ճիրճեմնը տեղ, չաթուն կտրվես ա, էտ պրեալը ըսես ա.— Պեներս օնգատրն ընգավ, այան թրթրվացալ ա։

Էտ ղաթումը մեծ ախպերը կյաս ա, թա.— Ա՛ տափը մտած, ա քիմսամրևռ, էս քաղաքեն մաչին մրեղ խայտառակ ըրեր։

Պրիս ըն լհա ընդի, հրղրցումը մին փոս կըտրես, այուն թրղես պըրծընես, ուրանք քաղաքան տուս կյաս։

Շատ ըն քյինիս, թա խրեգյ, էտ աստուծ կգյիդա, մըն էլ ըն տրսնաս մին պառավ կնեգյ, մին սուրու վեխճար ըրած առաչը, պըհես ա։ Տահանց վեր տսնաս ա, հրրցրփորց ա ընես, տրսնաս վեր անդար ըն, ըսես ա.— Ցրես մինակ մին կնեգյ ըմ, եկեքյ յրես ծրեղ պահիմ, տուր էլ կործ կանիքյ, ինձ պահիքյ։

Տահանք քյինիս ըն, ըսկսես ըն էտ պառավեն վրեխճարը պըհես, փաղը սրիս, վերչը տոնը սրհես ըն։

Մին օր տանը հաց չինիս։ Պառավը ըսես ա.— Մատաղ ընիմ ծրեղ, քյնցեքյ հանդը, յրես հաց ըմ թրխլական, յոր օնիմ, կյամ։

Տահանք քյինիս ըն։ Օրը քյսօր ա տռնաս, պառավը կյաս չի՞, ուրանք էլ էն ըն ինիս առուզնը։

Մեծ ախպերը ըսես ա. — Տու հեյվրններեն եշի, յրես քյինիմ մին խաբար սիրիմ։

Պիծի ախպերը ըսես ա. — Լավ, քյինի, քյինի՞։

Էտ մեծը վեր քյինիս ա, պիծի ախպերը յեշիս ա կըլխըեր, թա տրեսնա՝ արեը հի՞շտեղ ա, ախպերն էլ ա յրտրնական, թա չէ։ Վեր կլոխը պրցրրցնես ա, տրսնաս ա մին տանձի ճուռճուփած, ուրխրնաս ա, թա լհա եր ինիմ օտիմ, միչև հացը կյալը կենամ։

Պիծի ախպերը հեյվանը պիրիս ա ծառեն տակեն մաշալ ընես, ինքյը եր ինիս ծառը։ Հեյվրներեն ըսես ա. — Ցրես շրղրհրրրլական ըմ, վեր մինը կերեքյ, վայը ծրեղ տարալ ա, կյրլական ըմ ծրեր դիվանը անիմ, ծրեր կլոխը օյին պիրիմ, ծրեղ մին-մին կտորիմ։ Օտիքյ վուչ, կհրվաքիքյ, թուփ-թուփ անիքյ, յրես վեր ծառան վրեր կյամ, ծեր փայն էլ ըմ տրլական։

Եր ա ընիս մին լավ շրղրհրրես, սաղ ծառեն հիշքան տանձ ա ինիս, վեր ընես, ծառեն տակը լրցնես ա։ Դե հսած տա՞նձ, տուզնը, մաջալ տեռած հեյվան, յրրան ըն տրռնաս հանց օտե՞ս, վեր մինն

էլ չըն թուղես տակեն։ Էտ պրեալը ծառան հիշքան ճըղճըղոց ա տաս, փորը ճըղուտես, դե հեյվանը հի՞բ ա ըսկընաս, թա՛ էն հի՞նչ ա ըսես։

Սուս ըրած ուտես ըն, պըրծնես, ծառեն տակեն պարանց կյաս։ Մին չաթլակ տանձ կյաս ա ընգնես մին սրև էծու պոզի, իտի կընաս։ Էտ պրեալը կըզնըված, ծառան վեր ա կյաս, տրսնաս տակեն պեն չիկա։

Փռնես ա լոխճին կուտուրես, թուղես մինակ էն սրև էծը, թա՛. — Էս ա մինակ իմ փայըս պահալ, յրես էլ ուրան ըսպանել չը՞մ։

Մեծ ախպերը կյաս ա, տսնաս, հեյվանը լոխ կըտորած, վեր ածած։ Հարայ ա տաս, վա՜յ-վա՜յ ընես, թա՛ խե՞ ըստի յա։

Էտ պրեալ մըեռածըտ լոխ նաղլ ա ընես, հինչու իլալ ա։

Մեծ ախպերը ըսես ա.— Ա՛ կյիժ մըեռա՞ծ, ա՛ տափը մտած, ա՞ պիծի օլարան, ինձ դարդատ յանշաղ ըս շինա՞լ, պա մեր վթանան մըեզ խայտառակ ըրեր, քուչեցե, եկե ըստեղ, պա մըհենգյ թո՞ըը քյինիմ։

Պիծինը ըսես ա. — Վախել մեր, յրես պռավեն ջողարը տլական ըմ։

Պիրիս ըն էտ հեյվանը լոխ շըլըկես, պըրիս չոլումը վեր ըծես, ուրանք քյինիս տոն, թա՛ հաց օտին։ Պառավը պիրիս ա վեց ծու իփիս, տաս մեծ ախպորը, իրեքը իփիս, տաս պիծի ախպորը։

Էտ պիծինը խըռըվըվես ա, թա՛.— Խե՞ իմ փայս խրեգյ ա, ուտես չըմ։

Պառավը ըսես ա.— Դե, ջանետ մատաղ, ամմեն օրվա պորցիտ ա ըլի՞, խե խռա՞վալ չըս, մըհենգյ խըռըվես ըս։

Պիծինը ըսես ա.— Խե՞ յրես համ դոնումը հինգը-վեց վեխճար շլակիմ, պիրիմ չոլըմը տինիմ, համ էլ փայս խրեգյ ընի՞։

Պառավը ըսես ա.— Խե՞ վեխճարը վեններ չօնե՞, վեր կյա, խե՞ տու վըս շըլրկես։

Էտ պիծի ախպերը տուս ա կյաս, վա՜յ-վա՜յ ընես, հարա՜յ տաս, թա՛ եկալ ըն մեր վեխճարը լոխ չոլըմը կըտորալ։ Պառավը տուս ա կյաս, տրսնաս ղրթ-ղորթ սաղ վեխճարը կտորած, ամենին կլոխը ուրան քըշտեն տրրած։

Էտ խոխեքյը լաց ըն ընես, վայ-վայ ընես, թա՛.— Էս հո՞ւնց կապրինքյ, մըհենդյանց տենը։

Պառավը գյունաքար-գյունաքար ըսես ա.— Չէ, բալամ, խե՞ լաց ըք ինիս, տրեռած չպիդար, վեր տրեռալ ա, դե հի՞նչ անինքյ։

Տահանք սուս ըն ընես, քյինիս տոն։

Մեծ ախպերը ըսես ա.— Ա՛ մըեռած, կոզի սաղ վեխճարը կտորեցեր, լհա՛ ինձ խայտառակ տրոնալա ըզրդեցեր։

Պիծի ախպերը ըսես ա.— Պա նըհախ ըն ասալ, թա՛ աստուծ դարդը ընդրան տա, հու վեր դարմանը գյիդաս ա։